ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «16-ը» փետրվարի 2018թ.
ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Մասնակիցների՝ մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում լուսատվության չափը տարբերվում է հրավերով նախատեսված չափից՝ հանձնաժողովը, դրանց համարժեքության հարցը որոշելու նպատակով, որոշեց հանձնաժողովի գնահատող անդամ Մ. Խալաթյանի միջոցով դիմել պատասխանատու ստորաբաժանման համապատասխան մասնագետներին և նիստը շարունակել վերջիններս եզրակացությունը ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.2 **20.02.2018թ.**, ժամը 11:00-ին կայացած նիստում Մ. Խալաթյանի կողմից հանձնաժողովին ներկայացվեց պատասխանատու ստորաբաժանման համապատասխան մասնագետի եզրակացությունը, ինչն էլ հիմք ընդունելով հանձնաժողովը որոշեց տվյալ պարամետրի մասով ապրանքի տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի տեխնիկական բնութագրին համարժեք:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1.3 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին բոլոր առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի՝

- «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի կողմից 1-3-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքերի ամբողջական նկարագրում (Հրավերի 6.1 հավելված) առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում է ***«Լամպերի բնիկի հատվածում պետք է մակնշված լինի «ՊՆ-00000» հերթական չկրկնվող հնգանիշ համարներով»*** արտահայտությունը, որը հստակ նախատեսված է ընթացակարգի հրավերով:

- «Էջեն» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերում բացակայում են վերջինիս կողմից ներկայացված պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը (ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերություն), բացի այդ ներկայացված պայմանագրերի ընդհանուր գումարները տարբերվում են դրանց հաշիվ-ապրանքագրերում նշված գումարներից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացվելիք շտկումների քննարկման վերջնաժամկետի օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Կ. Հակոբյան

Գնահատող Մ. Խալաթյան

Գնահատող Հ. Բաղալյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ռ. Մարդոյան